# ԵԿԵԼ Է ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

ԱՅԺՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ



SDGE™ | & ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

# ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է

Վերջին տարիներին Կալիֆորնիայում տեղի են ունեցել երբևէ հանդիպած ամենակործանարար անտառային հրդեհները: **SDG&E**®-ը գործադրում է բոլոր ջանքերը՝ օգնելու պաշտպանել շրջանն անտառային հրդեհների վտանգից: Մեր գերակայությունը մեր հաճախորդների, աշխատակիցների և համայնքների անվտանգությունն է, այդ իսկ պատճառով մենք շարունակում ենք կատարելագործել և ամրապնդել մեր առկա սարքավորումներն ու կառույցները:

ԱՎԵԼԻ ՔԱՆԻ

**100**

տեսախցիկները վերահսկում են եղանակը և հրդեհները:

ԱՎԵԼԻ ՔԱՆԻ

**220**

օդերևութաբանական կայանները տրամադրում են քամու արագության, խոնավության և ջերմաստիճանի ցուցումներ:

**26,000**

փայտե հոսանքասյուներն արդիականացվել են՝ փոխարինվելով հրակայուն պողպատե սյուներով:

**455,000**

ծառերն ստուգվել և հատվել են SDG&E էլեկտրահաղորդալարերի մոտ:

**33**

անօդաչու թռչող սարքերն ամբողջ տարի անցկացնում են էլեկտրաէներգիայի և գազատարների օդային ստուգումներ:

**6**

ուղղաթիռներ՝ օգնելու անտառային հրդեհների անվտանգությանը և պարբերային էլեկտրական գծերին:

**Մենք դրանով չենք սահմանափակվում:** Եթե առկա են վտանգավոր իրավիճակներ, մենք կարող ենք անջատել հոսանքը՝ ձեր համայնքն անվտանգ պահելու համար: Սա կոչվում է **Հանրային անվտանգության նկատառումներով էլեկտրաէներգիայի անջատում (PSPS)**: Անտառային հրդեհների անվտանգության լրացուցիչ բարելավումները նպատակ ունեն նվազեցնել հաճախորդների ազդեցությունը և անտառային հրդեհների հնարավոր բռնկումները:

# Ի՞ՆՉ Է ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ:

**SDG&E**-ը վերահսկում է բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակները: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

**ՈՒԺԳԻՆ ՔԱՄԻՆԵՐ**
(Ներառյալ Կարմիր դրոշի նախազգուշացումները)

**ՑԱԾՐ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ**

**ՉՈՐ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
որը կարող է ծառայել որպես վառելիք

**ՀՐԴԵՀԻ ՎՏԱՆԳ**
էլեկտրական ենթակառուցվածքին

**ԻՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

**ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ**



Եթե առկա են վտանգավոր իրավիճակներ, մենք կարող ենք անջատել հոսանքը՝ որպես ծայրահեղ միջոց՝ ձեր համայնքն անվտանգ պահելու համար:

Հանրային անվտանգության նկատառումներով էլեկտրաէներգիայի անջատումների մասին ավելին իմանալու համար այցելեք **sdge.com/wildfire-safety** էջը:



# ԻՆՉՊԵ՞Ս Է ՈՐՈՇՎՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ:

## Հանրային անվտանգության նկատառումներով Էլեկտրաէներգիայի անջատման գործընթաց

### 7-10 օր առաջ

Երբ կանխատեսումները ցույց են տալիս վտանգավոր եղանակային պայմանների ներուժը, SDG&E-ն վերահսկում է հրդեհների ռիսկը և հնարավոր ազդեցությունը:

### 3-6 օր առաջ

SDG&E-ը համապատասխանաբար ճշգրտում է եղանակի կանխատեսումը և անտառային հրդեհների հավանականությունը:

### 2 օր առաջ

SDG&E-ը կսկսի տեղեկացնել հաճախորդներին, որոնց վրա կարող է ազդել Հանրային անվտանգության նկատառումներով էլեկտրաէներգիայի հնարավոր անջատումը՝ ներառյալ կարևորագույն հաստատությունները և բժշկական բազային բաժանորդները, ինչպես նաև նահանգային, շրջանային և քաղաքային պետական մարմինները:

### 1 օր առաջ

SDG&E-ը շարունակում է վերահսկել եղանակային պայմանները, շփվում է տուժած համայնքների հետ և համակարգում առաջին արձագանքողների և հանրային անվտանգության գործակալությունների հետ:

### Հոսանքազրկման օրը

SDG&E-ն ծանուցում է տուժած համայնքներին, ինչպես նաև կառավարությանը և հանրային անվտանգության գործակալություններին, որոնց էլեկտրաէներգիան անջատված է:

### Էլեկտրաէներգիան վերականգնվել է

Երբ եղանակային պայմանները դառնան անվտանգ, SDG&E-ը կսկսի էլեկտրաէներգիայի վերականգնումը: Բացօթյա բրիգադների և օդային ռեսուրսները կուսումնասիրեն վերգետնյա հաղորդալարերը՝ համոզվելու համար, որ ուժեղ քամիներից փասներ չկան և որ դրանք անվտանգ են:

## Ծանուցումների ժամանակացույց (ըստ հնարավորության)

- Հոսանքազրկումից ~48 ժամ առաջ
- ~24 ժամ հոսանքազրկումից առաջ
- ~12 ժամ հոսանքազրկումից առաջ
- 1-4 ժամ հոսանքազրկումից առաջ
- Երբ սկսվում է Հանրային անվտանգության նկատառումներով Էլեկտրաէներգիայի անջատումը
- Եթե բացվում է որևէ համայնքային ռեսուրս կենտրոն
- Երբ սկսվում են բացօթյա ստուգումները
- Երբ էլեկտրաէներգիան վերականգնվում է

Եթե մենք ակնկալում ենք, որ հոսանքն անջատված կլինի երկար ժամանակով, մենք կարող ենք բացել Համայնքային ռեսուրսների կենտրոններ և/կամ տեղեկատվական կենտրոններ՝ տուժած տարածքներում:

# ԻՄԱՑԵՔ՝ ՈՒՐ ԳՆԱԼ՝ ԵՐԿԱՐԱՁԳՎԱԾ ՀՈՍԱՆՔԱԶՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հանրային անվտանգության նկատառումներով հոսանքազրկումը կարող է տևել այնքան ժամանակ, քանի դեռ հրդեհավտանգ իրավիճակները սպառնալիք են հանդիսանում:

Մենք կարող ենք բացել մեր Համայնքային ռեսուրս կենտրոններից որևէ մեկը՝ տուժած տարածքներում:

Այս հաստատությունները ծառայում են որպես վայրեր, որտեղ տուժած բնակիչները կարող են ձեռք բերել նյութեր, սառույց, ջուր, նախուտեստներ, մեքենաների հոսանքի ինվերտորներ, արևային էներգիայով աշխատող փոքր մարտկոցներ և ռադիոկայաններ՝ հոսանքազրկումների մասին արդի տեղեկատվություն ստանալու համար:




Համայնքային ռեսուրս կենտրոնների ամբողջական ցանկի համար՝ ներառյալ հաստատությունների անուններն ու հասցեները, այցելեք **sdge.com/resource-centers** էջը:

# ՄՆԱՑԵՔ ԱՆՎՏԱՆԳ — ՁԵՌՆԱՐԿԵՔ ՔԱՅԼԵՐ

Մտածեք խելացի։ Ձեր անվտանգությունը պատահականությանը մի՛ թողեք։ Այժմ քայլեր ձեռնարկե՛ք պատրաստվելու ցանկացած արտակարգ իրավիճակի։

### Մշակեք արտակարգ իրավիճակների պլան

Որոշեք ընտանիքի հետ հանդիպման վայրը, անվտանգ ուղիներն ու ապաստարանները, ինչպես նաև, թե ինչ գործողություններ եք ձեռնարկելու։ Քննարկեք և կիրառեք պլանը ձեր ընտանիքի՝ ներառյալ ձեր երեխաների հետ։

### Նախապատրաստեք շտապ օգնության հավաքածու

Ձեռքի տակ պահեք առաջին անհրաժեշտության պարագաները։ Համոզվեք, որ ձեր հավաքածուն համալրված է ձեզ և ձեր ընտանիքին անհրաժեշտ իրերով՝ ներառյալ ձեր ընտանի կենդանիների, տարեցների և հաշմանդամություն ունեցողների համար նախատեսված իրերը։ Պահեք դրանք հեշտ տեղափոխվող տարաներում, ինչպիսիք են ուսապարկերը կամ պլաստիկ տուփերը։ Տե՛ս կից ստուգաթերթը։

### Ներբեռնեք մեր PSPS հավելվածը՝ «Զգուշացումներ SDG&E”-ի կողմից» (“Alerts by SDG&E”)

Եղեք տեղեկացված՝ Հանրային անվտանգության նկատառումներով Էլեկտրաէներգիայի անջատումների (PSPS) այս իրադարձությունների մասին հաղորդում ստանալուց առաջ, դրա ընթացքում և դրանից հետո։ Այցելեք **sdge.com/pspsapp** էջը՝ հավելվածը ներբեռնելու կամ ավելին իմանալու համար։

Անկախ հանգամանքներից՝ մենք ամեն ջանք կգործադրենք՝ ձեզ հետ հաղորդակցվելու համար։

### Թարմացրեք կոնտակտային տվյալները

Անցեք **sdge.com/MyAccount** էջ։ Կտտացրեք «Կառավարեք ձեր կոնտակտային տվյալները» (“Manage Your Contact Info”) և թարմացրեք ձեր կոնտակտային տվյալները՝ ներառյալ էլփոստի հասցեն։

### Գրանցվեք անջատման մասին ծանուցումների համար

Եղե՛ք տեղեկացված, որպեսզի մենք ձեզ օգնենք մնալ անվտանգ։ Այս գործընթացը նաև PSPS-ի համար է, ոչ միայն անտառային հրդեհների։ Սկսեք՝ համոզվելով, որ կոնտակտային տվյալները թարմացված են։ Այցելեք **sdge.com/notifications** *էջը*։

### Անցեք Կայունության վերաբերյալ մեր հարցումը և ստացեք խորհուրդներ

Մենք մշակել ենք հարցերի համառոտ շարք՝ ձեզ և ձեր սիրելիներին հատուկ առաջարկությունների համար։ Հարցումն ավարտելուց հետո դուք կարող եք ընտրել համայնքային կազմակերպություն, որին SDG&E-ը ձեր անունից 20 ԱՄՆ դոլար նվիրատվություն կկատարի։ Իմացեք ավելին **sdge.com/prepared** կայքում։

# ԵՂԵՔ ՊԱՏՐԱՍՏ — ՍՏԵՂԾԵՔ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

Նվազագույնի հասցրեք ձեր տան վտանգի ենթարկվելու հավանականությունը՝ փոփոխելով նրա շրջակայքի բուսականությունը՝ անտառային հրդեհներին դիմակայելու համար:

## ԳՈՏԻ 1

Ձեր տան ամենամոտ տարածքը պետք է լավ ընդարձակ լինի և պարունակի ցածր աճող և հրակայուն բույսեր, ինչպիսիք են խոտածածկը, բանջարանոցները, ծաղկանոցները կամ ձեր տեղական տնկարանի կողմից առաջարկվող բույսերը:

### 30 - 50 ոտնաչափ

Սան Դիեգո վարչաշրջանը պահանջում է 50 ոտնաչափ տարածք 1-ին գոտում:

## ԳՈՏԻ 2

Այս գոտում խորհուրդ է տրվում ցածր մակարդակի բուսական ծածկույթ, որոնք ապահովում են հրակայունություն և վառելիքի ցածր ծավալ: Խոսեք աճեցնողի հետ այն մասին, թե որ բույսերը կաշխատեն պաշտպանության ենթակա ձեր տարածքի համար:

### 100 ոտնաչափ

## ԳՈՏԻ 3

Նախքան բուն բուսականությունը փոխելը, որը կարող է ներառել վտանգված տեսակներ և ապրելավայրեր, խորհրդակցեք շրջակա միջավայրի կանոնակարգող մարմինների հետ:

### 100 ոտնաչափից հեռու





Կալիֆորնիան պահանջում է 100 ոտնաչափ պաշտպանական տարածք ձեր սեփականության շուրջ:

Անխախտ բուսականություն

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԿԱՌՈՒՑԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ավելի քան մեկ տասնամյակ SDG&E-ի «Անվտանգ Սան Դիեգո» բարեգործական նախաձեռնությունը դրամաշնորհներ է տրամադրել՝ աջակցելու առաջին արձագանքողներին, արտակարգ իրավիճակների պատրաստությանը, պաշտպանվող տարածքին և անտառային հրդեհների անվտանգության  հետ կապված կրթությանը՝ Ամերիկյան Կարմիր Խաչի, 211 Սան Դիեգոյի, 211 Օրինջ վարչաշրջանի, Սան Դիեգոյի շրջանի հրդեհային հիմնադրամի, Այրվածքների ինստիտուտի, Միջցեղային երկարաժամկետ վերականգնման հիմնադրամի, Համայնքային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմերի (CERT), Ցեղային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմերի, Հրդեհային անվտանգության խորհուրդների և այլ ոչ առևտրային կազմակերպությունների հետ՝ համայնքային համագործակցության միջոցով: Իմացեք ավելին **sdge.com/safe** էջից:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հետևեք մեզ՝

P.O. Box 129831 | San Diego, CA 92112-9831 | 800-411-7343

©2021 San Diego Gas & Electric Company. Ապրանքային նշաններն իրենց համապատասխան սեփականատերերի սեփականությունն են: Բոլոր իրավունքները պաշտպանված են:  S2110025 1021